



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

\_\_\_\_\_ N \_\_\_\_\_

Ձեր N \_\_\_\_\_ առ 26.01.2011

Քուվեյթի Ազգային վարժարանի մասին գիտեն շատերը: 1960 թվականից գործող կրթական այս հաստատությունն արդեն կես դար է, ինչ հայեցի կրթություն ու դաստիարակություն է տալիս մատաղ սերնդին: Այս վարժարանի շնորհիվ այստեղ ուսանած երեխաներն ու պատանիները ոչ միայն սովորում են հայ գիրն ու տառը, այլ նաև ճանաչում են հայ ժողովրդին, ծանոթանում մեր բազմադարյա պատմությանն ու հարուստ մշակութային ժառանգությանը: Իսկ նման լուրջ կրթական ուսումնասիրությունից, դաս ու դասավանդումից հետո անհնար է չսիրել ու չհարգել այն ժողովրդին, ով ծնել է այդ արժեքները: Հայ լեզվի, հայ մշակույթի ու հայեցի մտածողությամբ հագեցած այս վարժարանը ոչ այլ ինչ է, քան հայրենասիրության փայլուն օրինակ: Ապրել հայրենիքից հեռու և անընդմեջ ապրել հայրենիքի հոգսերով, մտահոգվել հայոց լեզվի, մշակույթի, պատմության հարատևությունն ապահովելու խնդրով, անշուշտ, տրված է միայն ընտրյալներին:

Ջերմորեն շնորհավորում են այս գեղեցիկ ու արդյունավետ գործի կազմակերպիչներին, այս հրաշալի կառույցի հիսնամյա հոբելյանի առթիվ, մաղթում են արևաշատություն, երկարակեցություն, ինչպես նաև անթիվ- անհամար աշակերտներ:

ՀՀ մշակույթի նախարար՝

Հասմիկ Պողոսյան